

Ֆիզիկական անձանց ավտոմեքենայի գրավով ապահովված վարկերի տրամադրման պայմաններ

1 Հիմնական պայմաններ		
1.1	Վարկի նպատակ	Սպառողական
1.2	Վարկի արժույթ	ՀՀ դրամ
1.3	Տարեկան տոկոսադրույք	18% - 24% (կախված հաճախորդի վարկային պատմությունից)
1.4	Տարեկան փաստացի տոկոսադրույք	36.17% - 76,19%
1.5	Ժամկետ	6 - 84 ամիս
1.6	Վարկի նվազագույն գումար	350,000 ՀՀ դրամ
1.7	Վարկի առավելագույն գումար	5,000,000 ՀՀ դրամ
1.8	Վարկային հայտի ուսումնասիրության վճար	Անվճար
1.9	Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար	Վարկի գումարի 3%
1.10	Վարկի ամսական սպասարկման միջնորդավճար	1% - 1.9%(կախված աճախորդի վարկային պատմությունից) հաշվարկված վարկի ժամանակացույցով սահմանված նախորդ մարման օրվա դրությամբ վարկի մնացորդային գումարի նկատմամբ
1.11	Վարկ/գրավ հարաբերակցություն	Մեքենայի շուկայական արժեքի մինչև 100%
2 Ընդհանուր պայմաններ		
2.1	Վարկառուին/գրավատուին ներկայացվող պահանջներ	18-70 տարեկան ՀՀ քաղաքացի հանդիսացող, ՀՀ-ում բնակվող ֆիզիկական անձ
2.2	Գրավի սեփականատեր	Վարկառու
2.3	Գրավի առարկային ներկայացվող պահանջներ	ԱՊՊԱ պայմանագրի և տեխնիկական կտրոնի ժամկետի վավերականություն նվազագույնը 30 օր, Վարչական իրավախախտումների մասին օրենքով սահմանված տուգանքների մասով 60 օրից ավել պարտավորությունների բացակայություն
2.4	ԿԱՍԿՈՒ ապահովագրություն	Չի պահանջվում
2.5	Գրավի գնահատում	Իրականացվում է Մոզո-ի կողմից՝ անվճար
2.6	Գրավի ձևակերպում	Հաճախորդի հաշվին՝ Ճանապարհային Ոստիկանությունում
2.7	Տոյժեր, տուգանքներ	
2.7.1	Ժամկետանց տոկոսագումաների գծով	Օրական 0.1 %
2.7.2	Ժամկետանց վարկի գումարի գծով տարեկան տոկոսներ	12%
2.7.3	Վարկի գումարի ամբողջությամբ կամ մասնակի վաղաժամկետ մարման դեպքում	Տոյժ չի սամանվում
2.8	Վարկի և տոկոսագումարի մարումներ	Վարկի և տոկոսագումարի հանրագումարի ամենամսյա հավասարաչափ մարումներ (անուիտետ)
2.9	Վարկի տրամադրման եղանակ	Անկանխիկ
2.10	Դրական որոշման և վարկի մերժման գործոններ	Դրական որոշման գործոններ՝ հաճախորդի վարկարժանության, եկամուտների բավարար մակարդակ և գրավադրվող մեքենայի բնութագրիչների համապատասխանություն Վարկային կազմակերպության կողմից սահմանված պահանջներին Մերժման գործոններ՝ հաճախորդի վարկարժանության և/կամ եկամուտների ոչ բավարար մակարդակ և/կամ գրավադրվող մեքենայի բնութագրիչների անհամապատասխանություն Վարկային կազմակերպության կողմից սահմանված պահանջներին
2.11	Որոշման կայացման ժամկետ	1 աշխատանքային օր
2.12	Որոշման մասին տեղեկացնելու ժամկետ	1 աշխատանքային օր
2.13	Վարկը տրամադրելու ժամկետ	Գրավի պայմանագիրը պետական գրանցում ստանալուց հետո 1 աշխատանքային օր

